17-ՐԴ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ

11 սեպտեմբերի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Օրակարգի հարցերն են.

1. Խմբագրական հանձնաժողովից ներկայացվող օրինագծերը.
2. Ժողովրդական դպրոցների դիրեկցիան վերացնելու օրինագիծը.
3. Միջնակարգ դպրոցների աշակերտներին զինվորական ծառայությունից ազատելու օրինագիծը.
4. Օրենքների հրատարակման օրինագիծը:

Պատգ. Մալխասյանը զեկուցում է, որ խմբագրական հանձնաժողովը կարողացել է խմբագրել միայն 2 օրինագիծ՝ բամբակի մոնոպոլիայի և դպրոցական օրինագծերը:

Զեկուցողը իր կողմից ավելացնում է, որ բամբակի օրինագծի վերջին կետը, որը վերաբերում է այն բանին, որ օրենքը ուժի մեջ է մտնում հունիսի 20-ից, հակասում է օրենքի մյուս կետին:

Պատգ. Զաքարյանը հիշեցնում է, որ խորհուրդը ընդունել է հանցավորներին դատական կարգով պատժի ենթարկել, մինչդեռ օրինագծի մեջ դրա մասին ոչինչ չէ ասված. զեկուցողը կարդում է օրենքի այն հոդվածը, որտեղ ասված է թե հանցավորները պատժվում են դատական կարգով:

Ֆինանսների մինիստրը գտնում է, որ ոչ մի պակասություն չկա օրենքի կետերի մեջ, քանի որ հանցանքը հաշվվում է օրենքի հրատարակության օրից: Նա առաջարկում է մտցնել հետևյալ ուղղումն «հանցավորները ենթարկվում են պատժի օրենքի հրատարակման օրից»: Օրենսգիծը անցնում է: Դպրոցական

օրենսգծի այն կետին, որը վերաբերում է դպրոցները զեմստվոյական ինքնավարություններին հանձնելուն, պատգ. Ազատյանը ուղղում է մտցնում հետևյալ ձևով՝ դպրոցները անցնում են տեղական ինքնավարություններին. օրենսգիծը այդ ուղղումով ընդունվում է:

Պատգ. Տիգրանյանը օրենսդրական հանձնաժողովի կողմից զեկուցում է օրենքների հրատարակման օրենսգիծը բաղկացած է 3 կետից: *Պատգ. Մալխասյանը* (Ս.-Դ) օրենսգծում գտնում է մեծ դեֆեկտներ: Նա գտնում է, որ մինչև առանձին մարմին չլինի՝ չի կարելի օրենքների հրատարակության ձևը որոշել, և առաջարկում է հետաձգել օրենսգիծը: Առաջարկը ընդունվում է:

Հետաձգվում է նաև ժողովրդական դպրոցների դիրեկցիայի վերացման օրենսգիծը: Հերթի է դրվում վերջին հարցը:

Պատգ. Տիգրանյանը զեկուցում է միջնակարգ դպրոցների աշակերտներին զինվորական ծառայությունից ազատելու մասին:

Կոմիսիան գտնում է, որ անհրաժեշտ է աշակերտներին արձակել զինվորական ծառայությունից: Այդ հարցը նույնպես վճռում են հետաձգել, այն պատճառով, որ այդ օրենսգիծը չի հանձնված զինվորական կոմիսիային, որի կարծիքը անհրաժեշտ է հարցի այս կամ այն լուծումը տալու համար: Խորհուրդը մեծամասնությամբ որոշում է օրենսգիծը հանձնել զինվորական կոմիսիային:

Նիստը փակվում է գիշերվա 9 ½-ին:

«Կառավարության լրաբեր», 13 սեպտեմբերի 1918թ.